

**ԿԱՐԾԻՔ**

**պաշտոնական ընդդիմախոսի**

Հենրիկ Վարդանի Վարդանյանի «ԳԱԶԵԼ ընտանիքի միկրոավտոբուսի արգելակային համակարգի հուսալիության գնահատումը, մեքենամասերի ռեսուրսային ցուցանիշներով» թեմայով, ատենախոսության, ներկայացված ԲՈԿ-ի 033 մասնագիտական խորհրդին Ե.05.01. «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ, տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

**ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը նվիրված է ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար շատ կարևորագույն խնդրի լուծմանը, ընդ որում այն կարևորվում է նաև երթևեկության անվտանգության առումով, քանի որ աշխատանքում լուծված է ավտոմոբիլի կառուցվածքային անվտանգության հատկանիշներից՝ ակտիվ անվտանգությունն ապահովող արգելակային համակարգի շահագործական հուսալիության բարձրացման խնդիրները, համակարգի մեքենամասերի, ֆունկցիոնալ պարամետրերի նորմատիվ արժեքների և ռեսուրսային ցուցանիշների պահպանման միջոցով:

ՀՀ տարածքում ուղևորափոխադրումներ իրականացնող շարժակազմերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն ԳԱԶԵԼ ընտանիքի միկրոավտոբուսները: Հետևաբար ՀՀ ճանապարհային պայմաններում ԳԱԶԵԼ ընտանիքի միկրոավտոբուսի արգելակային համակարգի շահագործական հուսալիության հետազոտումը մեքենամասերի և ֆունկցիոնալ պարամետրերի ռեսուրսային ցուցանիշների հիման վրա շատ արդիական է:

**ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ԴՐԱՆՑ  
ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Պաշտպանությանը ներկայացված ատենախոսության դրույթներն ու եզրակացությունները բխում են կատարված տեսական և գիտափորձական հետազոտությունների արդյունքներից: Կատարված եզրակացությունները համապատասխանում են իրականությանը և արժանահավատ են:

Այդ բոլորի մասին հիշատակվում են ատենախոսության համապատասխան բաժինների վերջում և կոնկրետացված են ընդհանուր եզրակացություններում և առաջարկություններում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ, ԿԻՐԱՌԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ**

Բազմակողմանի վերլուծվել և ուսումնասիրվել է արգելակային համակարգի մեքենամասերի, դրանց լծորդումների և ֆունկցիոնալ պարամետրերի նորմատիվների ռեսուրսային ցուցանիշները: Բացահայտվել են հուսալիությունը լիմիտավորող մեքենամասերի և ֆունկցիոնալ պարամետրերի ռեսուրսային ցուցանիշներն ըստ դրանց ֆիզիկական և երկրաչափական փոփոխության բնույթի ու օրինաչափությունների: Արգելակային համակարգի շահագործական հուսալիությունը դիտարկվել է հայեցակարգային նոր մոտեցմամբ: Խմբավորվել և գնահատվել են ԳԱՁԵԼ ընտանիքի միկրոավտոբուսի արգելակային համակարգի մերժերն ըստ պատճառահետևանքայն կապի և դրանց նորոգման ու վերականգնման անվանացանկի: Դուրս են բերվել մեքենամասերի և ֆունկցիոնալ պարամետրերի ռեսուրսների քանակական արժեքները, անվանացանկը, որը հնարավորություն կտա երաշխավորել և ապահովել միկրոավտոբուսի արգելակային հատկանիշները: Ատենախոսությունում մշակված արգելակային համակարգի վերականգնման տեխնոլոգիական օպերացիաները ներդրվել է ավտոտրանսպորտային ձեռնարկություններում:

**ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԵՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

**Ներածությունում** հիմնավորված է ատենախոսական թեմայի արդիականությունը և բերված են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները:

**Առաջին գլխում** ներկայացված են, ավտոմոբիլի արգելակային համակարգի մեքենամասերի հուսալիության և հատկապես ռետուրսային ցուցանիշների վերաբերյալ, ոլորտի հեղինակավոր մասնագետների հետազոտությունների արդյունքները, համակարգի տեխնիկական շահագործման ռեժիմների նորմատիվ բազայի ընտրության տեսանկյունից:

Բերված են եզրակացություններ և ձևակերպված են հետազոտությունների նպատակը և խնդիրները:

**Երկրորդ գլխում** ներկայացված է հետազոտության ընդհանուր մեթոդիկան, արգելակային համակարգի հուսալիության գնահատման նոր հայեցակարգի գիտական հիմնավորումը: Առաջարկվում է ավտոմոբիլի արգելակային համակարգի շահագործական հուսալիությունը գնահատել մեքենամասերի և ֆունկցիոնալ պարամետրերի համակցման եղանակով, ինչը կոնկրետ շահագործական պայմանների համար հնարավորություն է ստեղծում գնահատել մեքենամասերի ռետուրսի և ֆունկցիոնալ պարամետրերի նորմատիվ արժեքների ռիսկերի քանակական արժեքը:

**Երրորդ գլխում** ուսումնասիրված են ԳԱԶԵԼ միկրոավտոբուսի արգելակային համակարգի շահագործական փորձարկումների արդյունքները, մեքենամասերի և ֆունկցիոնալ պարամետրերի նորմատիվ արժեքների փաստացի փոփոխությունը, դրանց օրինաչափությունը: Ներկայացված են հուսալիության տեսակետից կրիտիկական և հուսալիությունը լիմիտավորող մեքենամասերն ու ֆունկցիոնալ հանգույցները, կատարված է ռիսկերի գնահատում:

Արգելակային համակարգի մեքենամասերի, դրանց լծորդումների և ֆունկցիոնալ պարամետրերի նորմատիվների ռետուրսային ցուցանիշների հետազոտումը կատար-



վել է շահագործական և ճանապարհային փորձարկումների եղանակով: Դուրս է բերվել արգելակային վերդիրների մաշը և մաշի տեմպը, դրանց փոխարինելու ստոխաստիկ բնութագրերը:

Կատարվել են համապատասխան մեկնաբանություններ և գործնական առաջարկություններ, որոնք ամփոփվել են տվյալ բաժնի եզրակացություններում:

**Չորրորդ գլուխում** կատարված են գիտափորձնական հետազոտությունների արդյունքների վերլուծություն և աշխատանքի տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդական հիմնավորում:

Բացահայտված է միկրոավտոբուսի մեքենամասերի բնութագրական մերժերի առաջացման պատճառահետևանքային կապերը:

Ներկայացվել է միկրոավտոբուսի առջևի և հետին կամրջակների արգելակային մեխանիզմների ծանրաբեռնվածությունը: Աշխատանքի արդյունքների տնտեսական արդյունավետության հիմնավորումը կատարված է գամմա-տոկոսային ռեսուրսի ներդրման միջոցով անարդյունավետ պարապուրդների նվազեցման և արգելակային համակարգի տեխնիկական պատրաստականության բարձրացման հաշվին: Ներկայացվել է նյութական ծախսերի, աշխատանքային ծախսերի, եկամուտների, շահույթի և շահութաբերության որոշման մեթոդիկական, հետազոտվող տնտեսվարող սուբյեկտի արտադրատնտեսական գործունեության տվյալների օգտագործմամբ հաշարկվել է բալանսային շահույթը և շահութաբերության աճ մեկ տարում:

Այս բաժինը նույնպես եզրափակվում է կատարված եզրակացություններով եվ առաջարկություններով:

Ատենախոսության վերջում արվել են ընդհանուր եզրակացություններ և գործնական առաջարկություններ:

Ընդհանուր առմամբ կատարված է ծավալուն և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքները դրական գնահատականի են արժանացել ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային ձեռնարկության կողմից:

Աշխատանքում նկատվել են որոշ բացթողումներ, որոնց մասին ցանկանում են ներկայացնել:

1. Ատենախոսական աշխատանքում լուսաբանված չէ, կանոնակարգված նորոգման առավելությունը ընթացիկ նորոգման նկատմամբ:
2. Կարծում եմ ճիշտ կլիներ տալ մեկնաբանություն, թե ինչ է նշանակում ասելով, արգելակային համակարգի հուսալիությունը լիմիտավորող մեքենամասեր, արտահայտությունը:
3. Ատենախոսությունում պարզաբանված չէ, ավտոմոբիլի ընդհանուր վազքի աճին զուգահեռ, արգելակային կոճղակների ռեսուրսի նվազման պատճառները:
4. 115 էջ-ում վերլուծված է արգելակների ֆրիկցիոն զույգի ջերմային ռեժիմի վիճակը, սակայն գիտափորձնական հետազոտություններում ջերմային ռեժիմի մասին խոսք չկա:

Արված դիտողությունները և ցանկությունները բոլորովին բացասաբար չեն ազդում ատենախոսական աշխատանքի որակի վրա և այն ունի գործնական նշանակություն:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Պաշտպանության ներկայացված ատենախոսական աշխատանքն ավարտուն աշխատանք է և լուծում է ուղևորափոխադրումներով զբաղվող ավտոտրանսպորտային ձեռնարկությունների համար շատ կարևոր նշանակություն ունեցող կիրառական խնդիրներ, որոնք նվիրված են ավտոմոբիլի արգելակային համակարգի շահագործական հուսալիության բարձրացմանը: Աշխատանքը կարևորվում է նաև երթևեկության անվտանգության առումով:

Ատենախոսական աշխատանքն բավարարում է ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման

կանոնակարգի պահանջներին, համապատասխանում է Ե.05.01. «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտության բնութագրին: Ատենախոսության հեղինակ Հենրիկ Վարդանի Վարդանյանը արժանի է, որպեսզի նրան շնորհվի տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս,  
տեխնիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Գ.Վ.Մուսայելյան

Գ.Վ.Մուսայելյանի ստորագրությունը հաստատում են

ՀԱՊՀ գիտական քարտուղար



Հ.Ա.Բալաբանյան

20.06.2020թ.